ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 28 - Ա **25 հունվարի 2021 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 234-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 32-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 15-րդ և 17-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 26-ի N 63-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 234-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 1-ին կետում

   1) «Սաֆարյան Համբարձում Սարիբեկի /վերադասի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Դավթյան Դավիթ /վերադասի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով» բառերով.

   2) «Աբրահամյան Լեյլի /մանկխորհրդի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Մովսիսյան Հրայր Վեմիրի /մանկխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով» բառերով:

25.01.2021

ԳՆԵԼ ԳԱՆԴԻՆԱՆ

Digitally signed by SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ